



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՕՐԻՅՆԷՔ Ս.
ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՆՈՒՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ
ԱՌԻԹՈՎ**

Շաբաթ, 31 Հոկտեմբերը մեր եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Ամենայն Սրբոց տօնն է, որ միաժամանակ Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ անուանակոչութեան տօնն է. այս առիթով, Կիրակի, Նոյեմբեր 1-ին, Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի եկեղեցւոյ մէջ:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ եւ մատաղօրհնէք պիտի կատարէ Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ:

Պատարագէն ետք, մատաղի օրհնութիւն տեղի պիտի ունենայ «Աւետիսեան» սրահին մէջ, պատրաստուած՝ եկեղեցւոյ Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ:

Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին եւ եկեղեցւոյ հիմնադրութեան 46րդ տարեդարձին առիթով, ճաշկերոյթ տօնախմբութիւն մը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 6 Նոյեմբերի երեկոյեան, Արարատ Տան «Տօքսմէճեան» սրահին մէջ, Միշըն Հիլզ:

Ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազանին հովանաւորութիւնը:

Ներկայ պիտի ըլլայ Ազգ. Վարչութեան անդամներէն Տիար Խաչիկ Երեցեան:

Ձեռնարկը կազմակերպուած է եկեղեցւոյ հովիւին, հոգաբարձութեան եւ Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ. հիւրընկալութիւնը ստանձնած են Արեւեան եւ Կիւլէսերեան ընտանիքները:

**EPISCOPAL DIVINE LITURGY AND BLESSING OF MADAGH ON
THE NAME DAY OF HOLY MARTYRS CHURCH IN ENCINO**

According to the Armenian Church Calendar, Saturday, October 31st, is the All Saints Day, which is also the name day of Holy Martyrs Church of Encino.

On this occasion, on Sunday, November 1st, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the

sermon at Holy Martyrs Church. The Prelate will also conduct the blessing of *madagh*.

And on the evening of Friday, November 6th, the 46th anniversary of Holy Martyrs Church will be celebrated at “Deukmejian” Hall of Ararat Home in Mission Hills. The banquet is organized by the parish Pastor, Board of Trustees, and Ladies Auxiliary, and is being held under the auspices of the Prelate. The evening will be hosted by the Arevian and Gulesserian families.

ԱԶԳ. Ռ. ԹԻՖԷՆՔԵԱՆ ՄԱՆԿԱՄԱՍՈՒՐԻՆ 35ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Կլենտելի Ռիչըրտ Թիֆենքեան Ազգային Մանկամասուր Մանկապարտեզը կը տօնէ իր հիմնադրութեան 35-րդ տարեդարձը: Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը վայելող ձեռնարկ մը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 6 Նոյեմբերի երեկոյեան ժամը 8-ին, Օմնի պանդոկին մէջ, Լոս Անճելըս:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Կլենտելի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Վազգէն քիւյ. Աթմաճեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին:

35TH ANNIVERSARY OF TUFENKIAN PRE-SCHOOL

On Friday, November 6th, 2009, Richard Tufenkian Pre-School will celebrate its 35th anniversary with a banquet to be held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, at Omni Hotel in Los Angeles.

Rev. Fr. Vazken Atmajian will represent the Prelate at the banquet.

ՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Չորեքշաբթի, 28 Հոկտեմբերի երեկոյեան, կազմակերպութեամբ Համազգայինի Շրջանային Վարչութեան, նկարչական ցուցահանդէս մը տեղի ունեցաւ Կլենտելի Ս. Աստուածածին եկեղեցւոյ սրահին մէջ:

Ցուցադրութեան դրուած էին Art 4 Art studioի սեփականատեր՝ արուեստագետ Ռազմիկ Հաճիկեանի եւ աշակերտներուն գործերը:

Առաջնորդ Սրբազանը այցելեց ցուցահանդէս ու գնահատանքով արտայայտուեցաւ տարուած աշխատանքին մասին: Աւելի ուշ, յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Կլենտելի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր

հովհաննէրէն՝ Արժ. Տ. Արտակ Զիւյ. Տէմիրճեան աղօթքով բացումը կատարեց
ցուցահանդէսին:

PRELATE CONVEYS HIS BLESSINGS AT THE 10TH ANNIVERSARY EXHIBIT OF ART 4 ART

On Wednesday, October 28th, 2009, the 10th anniversary exhibit of Art 4 Art Fine Art Studio was held at “Armenak Der Bedrossian” Hall of St. Mary’s Church in Glendale. The exhibit was organized by Hamazkayin Regional Executive and featured the works of Art 4 Art students and teachers Samvel and Razmik Hadjikian.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited the exhibit and conveyed his congratulations and commendations to Samvel and Razmik Hadjikian. The exhibit officially opened with a prayer led by Rev. Fr. Ardak Demirjian on behalf of the Prelate.